

ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ, 1971թ.  
ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐ

Ցանկեր (Տես [Վերահսկվող Նյութերի Կանաչ Ցուցակը`  
http://www.incb.org/e/index.htm](http://www.incb.org/e/index.htm))

ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ  
ՆԱԽԱԲԱՆ

*Կողմերը, Մտահոգված մարդկության առողջությամբ և բարեկեցությամբ, Մտահոգված որոշ հոգեմետ նյութերի չարաշահման արդյունքում հանրային առողջապահության և սոցիալական խնդիրներով, Հաստատակամությամբ լի, որպեսզի կանխարգելեն և պայքարեն այսպիսի նյութերի չարաշահման և դրան զարկ տվող ապօրինի շրջանառության դեմ, Ընդունելով, որ խիստ միջոցառումներ են անհրաժեշտ այսպիսի նյութերի օգտագործումը օրինական նպատակներով սահմանափակելու համար, Ընդունելով, որ հոգեմետ նյութերի օգտագործումը բժկական և գիտական նպատակներով անհրաժեշտ է և որ դրանց մատչելիությունը այսպիսի նպատակների համար պետք է խիստ սահմանափակված լինի, Հավատալով, որ այսպիսի նյութերի չարաշահման դեմ պայքարը պահանջում է համակարգված և համընդհանուր գործողություն, Ընդունելով հոգեմետ նյութերի վերահսկման բնագավառում Միացյալ Ազգերի իրավասությունները և ցանկությունը, որ համապատասխան միջազգային մարմինները պետք է այդ Կազմակերպության մեջ լինեն, Ընդունելով այս նպատակներին հասնելու համար միջազգային կոնվենցիայի անհրաժեշտությունը, Այսուհետ համաձայնվում են`*

*Հոդված 1*

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒՄ

Բացառությամբ այն դեպքերի, երբ այլ կերպ է արտահայտված կամ որտեղ ենթատեքստը այլ բան է պահանջում, սույն Կոնվենցիայի մեջ հետևյալ տերմիններն ունեն ստորև բերված նշանակությունները`

a) «Խորհուրդ» - Միացյալ Ազգերի Տնտեսական և Սոցիալական Խորհուրդ:

b) «Հանձնաժողով» - Խորհրդի Թմրանյութերի Հանձնաժողով:

c) «Տնօրենների Խորհուրդ» - 1961թ. Թմրանյութերի Եզակի Կոնվենցիայով սահմանված Թմրանյութերի Վերահսկման Միջազգային Տնօրենների Խորհուրդ:

d) «Գլխավոր Քարտուղար» - Միացյալ Ազգերի Գլխավոր Քարտուղար:

e) «Հոգեմետ նյութ» - Ցանկ I, II, III կամ IV մեջ նշված ցանկացած բնական կամ սինթետիկ նյութ:

f) «Պատրաստուկ»`

i) Ցանկացած ֆիզիկական վիճակով ցանկացած լուծիչ կամ խառնուրդ, որը մեկ կամ ավել հոգեմետ նյութ է պարունակում կամ

ii) Մեկ կամ ավել հոգեմետ նյութեր` դոզային ձևով:

g) «Ցանկ I», « Ցանկ II», « Ցանկ III» և « Ցանկ IV» - հոգեմետ նյութերի համապատասխանաբար համարակալված ցանկեր՝ հավելված սույն Կոնվենցիային՝ փոփոխված համաձայն Հոդված 2:

h) «Արտահանում» և «Ներմուծում» իրենց համապատասխան մեջբերմամբ - հոգեմետ նյութի ֆիզիկական փոխանցումը մի Պետությունից մեկ այլ Պետություն:

i) «Արտադրություն» - այն բոլոր գործընթացները, որոնցով հոգեմետ նյութեր են ձեռքբերվում և ներառում է նաև հոգեմետ նյութերի փոխակերպումը այլ հոգեմետ նյութերի: Այս տերմինը ներառում է նաև դեղագործների կողմից դուրս գրվածից բացի այլ պատրաստուկների պատրաստում:

j) «Ապօրինի շրջանառություն» - հոգեմետ նյութերի արտադրում և շրջանառություն՝ ի հակասություն սույն Կոնվենցիայի դրույթներին:

k) «Շրջան» - Պետության ցանկացած մաս, որը՝ համաձայն Հոդված 28 սույն Կոնվենցիայի նպատակների, դիտարկվում է որպես առանձին միավոր:

l) «Շենքային պայմաններ» - շինություններ կամ շինությունների մասեր՝ ներառյալ դրա հողային տարածքը:

## Հոդված 2

### ՆՅՈՒԹԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

1. Եթե Կողմը կամ Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը դեռ միջազգային վերահսկման ներքո չգնտվող նյութի մասին տեղեկություն ունի, որն, ըստ վերջինիս, պետք է ավելացվի սույն Կոնվենցիայի Ցանկերից որևէ մեկին, ապա այն պետք է ծանուցի Գլխավոր Տնօրենին և սույն ծանուցումը հիմնավորող տեղեկատվություն տրամադրի: Վերը նշված ընթացակարգերը կիրառվում են նաև, երբ Կողմը կամ Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը տեղեկություններ ունի որևէ նյութի փոխանցումը մի Ցանկի նյութերից մեկ այլ Ցանկի նյութերի կարգի մասին կամ նյութի վերացումը Ցանկերից:

2. Գլխավոր Քարտուղարը պետք է փոխանցի այս ծանուցումը, կամ ըստ նրա ցանկացած այլ համապատասխան տեղեկություն, Կողմերին, Հանձնաժողովին և երբ ծանուցումը արել է Կողմը, ապա նաև Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությանը:

3. Եթե այսպիսի ծանուցում պարունակող տեղեկատվությունը մատնանշում է, որ այդ նյութը ենթակա է պարբերություն 4 համաձայն Ցանկ I կամ Ցանկ II մեջ ներգրավված լինելուն, ապա Կողմերը իրենց հասու տեղեկությունների լույսի ներքո պետք է քննեն Ցանկ I կամ Ցանկ II մեջ ներառված նյութերի հանդեպ կիրառվող վերահսման փորձնական միջոցառումների հնարավորությունը:

4. Եթե Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը գտնում է՝

a) Որ նյութը կարող է՝

i) 1) Կախվածության վիճակի հանգեցնել և

2) Կենտրոնական նյարդային համակարգի խթանում կամ դեպրեսիա, որը շարժական ֆունկցիաների կամ մտածողության կամ վարքի կամ ընկալման կամ տրամադրության զգայախաբության կամ խանգարումների կհանգեցնի կամ

ii) Նմանատիկ չարաշահման և նման չարորակ ազդեցությունների, ինչպիսիք են Ցանկեր I, II, III կամ IV նկարագրված նյութերի ազդեցությունները կամ

b) Բավարար ապացույց կա, որ նյութը չարաշահվում է կամ հավանականություն կա, որ կչարաշահվի, առաջացնելով հանրային առողջապահության և սոցիալական խնդիրներ: Երաշխավորեպով նյութի միջազգային վերահսկումը՝ Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը պետք է Հանձնաժողովին ներկայացնի նյութի գնահատումը, ներառյալ չարաշահման չափը կամ հավանականությունը, հանրային առողջապահության և սոցիալական խնդիրների լրջությունը և բժշկական թերապևտությունում նյութի օգտակարության աստիճանը վերահսկման միջոցառումների առաջարկությունների հետ, եթե այդպիսիք կան, որոնք կպահանջվեն առաջարկությունների լույսի ներքո:

5. Հաշվի առնելով Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության առաջարկությունները, որի գնահատականները բժշկական և գիտական հարցերում որոշիչ պետք է լինեն, ուշադրության կենտրոնում պահելով իրեն համապատասխան տնտեսական, սոցիալական, իրավական, վարչարարական և այլ գործոնները, Հանձնաժողովը կարող է նյութը ավելացնել Ցանկեր I, II, III կամ IV: Հանձնաժողովը կարող է հետամուտ լինել հետագա տեղեկատվության՝ Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունից կամ այլ համապատասխան աղբյուրներից:

6. Եթե պարբերություն 1 սահմանված ծանուցումը վերաբերում է արդեն Ցանկերում ընդգրկված նյութին, ապա համաձայն պարբերություն 4 Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը պետք է իր նոր բացահայտումների, նյութի նոր գնահատումների ու այդ գնահատման լույսի ներքո վերահսկման միջոցառումների նոր առաջարկությունների մասին տեղյակ պահի Հանձնաժողովին: Հանձնաժողովը, հաշվի առնելով պարբերություն 5 սահմանված Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության առաջարկությունները և հաշվի առնելով նույն պարբերությունում նշված գործոնները, կարող է որոշել նյութը մի Ցանկից մեկ այլ Ցանկ փոխանցել կամ հանել դա Ցանկերից:

7. Սույն Հոդվածին համապատասխան Հանձնաժողովի կայացրած ցանկացած որոշում պետք է հաղորդվի Գլխավոր Քարտուղարի միջոցով Միացյալ Ազգերի բոլոր Անդամ Պետություններին, սույն Կոնվենցիայի ոչ անդամ Պետություններին, Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությանը և Տնօրենների Խորհրդին: Այսպիսի որոշումը ցանկացած Կողմի պարագայում պետք է ամբողջովին ուժի մեջ մտնի այսպիսի ծանուցումից ի պահ 180 օր անց, բացառությամբ այն Կողմի համար, որը նշված ժամանակում, նյութը Ցանկին ավելացնելու որոշման առումով, Գլխավոր Տնօրենին գրավոր տեղեկացրել է, որ բացառիկ հանգամանքների պատճառով, այն չի կարող ուժի մեջ մտցնել այդ որոշումը: Այսպիսի ծանուցումը պետք է հստակորեն նշի բացառիկ գործողության պատճառները: Անկախ այս ծանուցումից՝ յուրաքայուր Կողմ պետք է կիրառի վերահսկման առնվազն հետևյալ միջոցառումները՝

a) Ցանկ I ավելացված նախկինում չվերահսկվող նյութի առումով արդեն ծանուցված Կողմը, հնարավորինս հաշվի առնելով Հոդված 7 նշված այդ նյութի վերահսկման հատուկ միջոցառումները՝ պետք է՝

i) Լիցենզիա պահանջի Հոդված 8 սահմանված Ցանկ II նյութերի արտադրման, առևտրի և բաշխման համար,

ii) Բժշկական դեղատոմս պահանջի Հոդված 9 սահմանված Ցանկ II նյութերի մատակարարման և բաշխման համար,

- iii) Ենթարկվի Հոդված 12 սահմանված արտահանման և ներմուծման պարտավորություններին, բացառությամբ մեկ այլ կողմի, որը ծանուցված է տվյալ նյութի մասին,
  - iv) Ցանկ II նյութերի պարագայում, ենթարկվի Հոդված 13 պարտավորություններին՝ կապված արտահանման և ներմուծման արգելման և սահմանափակման հետ,
  - v) Տնօրենների Խորհրդին վիճակագրական հաշվետվություններ ներկայացնի՝ համաձայն Հոդված 16 պարբերություն 4 a) և
  - vi) Համաձայն Հոդված 22 միջոցառումներ՝ ձեռնարկի վերը նշված պարտավորություններին հետևող օրենքներին և կանոնակարգումներին հակասող գործողությունների ճնշման համար:
- b) Նախկինում չվերահսկվող նյութի Ցուցակ II ավելացնելու մասին տեղյակ պահված Կողմը այդ նյութի առումով պետք է՝
- i) Լիցենզիա պահանջի Հոդված 8 սահմանված Ցանկ II նյութերի արտադրման, առևտրի և բաշխման համար,
  - ii) Բժշկական դեղատոմս պահանջի Հոդված 9 սահմանված Ցանկ II նյութերի մատակարարման և բաշխման համար,
  - iii) Ենթարկվի Հոդված 12 սահմանված արտահանման և ներմուծման պարտավորություններին, բացառությամբ մեկ այլ կողմի, որը ծանուցված է տվյալ նյութի մասին,
  - iv) Ենթարկվի Հոդված 13 պարտավորություններին՝ կապված արտահանման և ներմուծման արգելման և սահմանափակման հետ,
  - v) Տնօրենների Խորհրդին վիճակագրական հաշվետվություններ ներկայացնի՝ համաձայն Հոդված 16 պարբերություն 4 a), c) և d) և
  - vi) Համաձայն Հոդված 22 միջոցառումներ ձեռնարկի վերը նշված պարտավորություններին հետևող օրենքներին և կանոնակարգումներին հակասող գործողությունների ճնշման համար:
- c) Նախկինում չվերահսկվող նյութի Ցուցակ III ավելացնելու մասին տեղյակ պահված Կողմը այդ նյութի առումով պետք է՝
- i) Լիցենզիա պահանջի Հոդված 8 սահմանված Ցանկ II նյութերի արտադրման, առևտրի և բաշխման համար,
  - ii) Բժշկական դեղատոմս պահանջի Հոդված 9 սահմանված Ցանկ II նյութերի մատակարարման և բաշխման համար,
  - iii) Ենթարկվի Հոդված 12 սահմանված արտահանման և ներմուծման պարտավորություններին, բացառությամբ մեկ այլ կողմի առումով, որը ծանուցված է տվյալ նյութի մասին,
  - iv) Ենթարկվի Հոդված 13 պարտավորություններին՝ կապված արտահանման և ներմուծման արգելման և սահմանափակման հետ և
  - v) Համաձայն Հոդված 22 միջոցառումներ՝ ձեռնարկի վերը նշված պարտավորություններին հետևող օրենքներին և կանոնակարգումներին հակասող գործողությունների ճնշման համար:
- d) Նախկինում չվերահսկվող նյութի Ցուցակ IV ավելացնելու մասին տեղյակ պահված Կողմը այդ նյութի առումով պետք է՝

- i) Լիցենզիա պահանջի Հոդված 8 սահմանված Ցանկ II նյութերի արտադրման, առևտրի և բաշխման համար,
  - ii) Ենթարկվի Հոդված 13 պարտավորություններին՝ կապված արտահանման և ներմուծման արգելման և սահմանափակման հետ և
  - iii) Համաձայն Հոդված 22՝ միջոցառումներ ձեռնարկի վերը նշված պարտավորություններին հետևող օրենքներին և կանոնակարգումներին հակասող գործողությունների ճնշման համար:
- e) Նախկինում չվերահսկվող նյութերի ավելի խիստ վերահսկման և պարտավորությունների Ցուցակին ավելացնելու մասին տեղյակ պահված Կողմը պետք է կիրառի սույն Կոնվենցիայի առնվազն բոլոր դրույթները այն Ցուցակին, որտեղ ավելացվել է նյութը:
8. a) Համաձայն սույն Հոդվածի Հանձնաժողովի կայացրած որոշումը, վերջինիս կայացումից 180 օրվա ընթացքում տրված ցանկացած Կողմի հարցումով պետք է վերանայվի Խորհրդի կողմից: Վերանայման հարցումը դրան վերաբերող համապատասխան բոլոր փաստաթղթերի հետ մեկտեղ պետք է ուղարկվի Գլխավոր Քարտուղարին:
- b) Գլխավոր Քարտուղարը պետք է վերանայման հարցման և համապատասխան փաստաթղթերի պատճենները ուղարկի Հանձնաժողովին, Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությանը և բոլոր Կողմերին՝ հրավիրելով նրանց մեկնաբանություններ ներկայացնել իննսուն օրվա ընթացքում: Ստացված բոլոր մեկնաբանությունները պետք է ներկայացվեն Խորհրդի վերանայմանը:
- c) Խորհուրդը կարող է հաստատել, փոխել կամ փոփոխել Հանձնաժողովի որոշումը: Խորհրդի որոշման մասին ծանուցումը պետք է փոխանցվի Միացյալ Ազգերի բոլոր Անդամ Երկրներին, սույն Կոնվենցիայի ոչ անդամ Պետություն Կողմերին, Հանձնաժողովին, Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությանը և Տնօրենների Խորհրդին:
- d) Վերանայման ընթացքում Հանձնաժողովի պարբերություն 7 սահմանված սկզբնական որոշումը պետք է մնա ուժի մեջ:
9. Կողմերը պետք է ամեն ինչ անեն սույն Կոնվենցիայում չներառված, բայց հոգեմետ նյութերի ապօրինի արտադրությունում օգտագործվող, նյութերի նկատմամբ վերահսկման համապատասխան միջոցառումներ կիրառելու համար:

### Հոդված 3

#### ՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1. Սույն Հոդվածի հետևյալ պարբերություններով նախատեսված դեպքերից բացի, պատրաստուկը ենթակա է իր մեջ պարունակվող հոգեմետ նյութերի նկատմամբ կիրառվող վերահսկման բոլոր միջոցառումների և եթե այն պարունակում է մեկից ավել այսպիսի նյութ, ապա այս նյութերի հանդեպ կիրառվող ամենախիստ միջոցառմանը:
2. Եթե Ցանկ I նյութից բացի այլ հոգեմետ նյութ պարունակող պատրաստուկը պատրաստվել է այն կերպով, որ չի ներկայացնում կամ ներկայացնում է աննշան չարաշահման ռիսկ և նյութը չի կարող հանվել այն քանակով, որը հետագայում չարաշահման առարկա կհանդիսանա և հանրային առողջության և սոցիալական հարցերի համար խնդիր կհանդիսանա, ապա պատրաստուկը կարող է հանվել սույն

Կոնվենցիայով սահմանված վերահսկման որոշ միջոցառումներից՝ համաձայն պարբերություն 3:

3. Եթե նախորդ պարբերության շրջանակներում Կողմը պատրաստուկին վերաբերող հիմքեր է գտնում, ապա կարող է իր երկրում կամ իր շրջաններից մեկում պատրաստուկը հանել սույն Կոնվենցիայով նախատեսված վերահսկման միջոցառումներից մեկի կամ բոլորի շարքից, բացառությամբ հետևյալ պահանջների՝

- a) Հոդված 8 (լիցենզիաներ), քանի որ այն վերաբերում է արտադրությանը,
- b) Հոդված 11 (գրանցումներ), քանի որ այն վերաբերում է բացառված պատրաստուկներին,
- c) Հոդված 13 (արտահանման և ներմուծման արգելում և սահմանափակում),
- d) Հոդված 15 (տեսչություն), քանի որ այն վերաբերում է արտադրությանը,
- e) Հոդված 16 (Կողմերին տրամադրվելիք հաշվետվություններ), քանի որ այն վերաբերում է բացառված պատրաստուկներից և
- f) Հոդված 22 (պատիժների դրույթներ), անքանով, որքանով անհրաժեշտ է վերը նշված պարտավորություններին հետևող օրենքներին և կանոնակարգումներին հակասող գործողությունների ճնշման համար:

Կողմը Գլխավոր Քարտուղարին պետք է տեղյակ պահի ցակացած այսպիս որոշման, բացառված պատրաստուկի անվան և բաղադրության և այն միջոցառումների մասին, որոնցից դա բացառվում է: Գլխավոր Քարտուղարը պետք է այս ծանուցումը փոխանցի Կողմերին, Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությանը և Տնօրենների Խորհրդին:

4. Եթե Կողմը կամ Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը պարբերություն 3 սահմանված բացառությունների մասին տեղեկություն ունի, որն ըստ նրա կարող է ամբողջովին կամ մասնակիրոեն ավարտվել, ապա այն պետք է ծանուցի Գլխավոր Քարտուղարին և նրան տեղեկություններ ներկայացնի սույն ծանուցման վերաբերյալ: Գլխավոր Քարտուղարը պետք է այս ծանուցումը և ըստ նրա այլ համապատասխան տեղեկությունները փոխանցի Կողմին և Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությանը: Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը պետք է Հանձնաժողովին ներկայանցնի պարբերություն 2 սահմանված հարցերի հետ կապված պատրաստուկների գնահատականը՝ վերահսկման միջոցառումների առաջարկություններով հանդերձ, որոնցից պատրաստուկը պետք է բացառվի: Հաշվի առնելով Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության առաջարկությունները, որի գնահատականը գիտական և բժշկական հարցերում պետք է որոշիչ լինի և տնտեսական, սոցիալական, իրավական, վարչական և այլ գործոնները, Հանձնաժողովը կարող է որոշել դադարեցնել պատրաստուկի բացառումը վերահսկման մեկ կամ բոլոր միջոցառումներից: Հանձնաժողովի ցանկացած որոշում, կայացրած համաձայն սույն պարբերության, պետք է Գլխավոր Տնօրենի միջոցով հաղորդվի Միացյալ Ազգերի բոլոր Անդամ Պետություններին, սույն Կոնվենցիայի ոչ Պետություն Կողմերին, Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությանը և Տնօրենների Խորհրդին: Բոլոր կողմերը պետք է միջոցառումներ ձեռնարկեն Գլխավոր Քարտուղարի ծանուցումից ի պահ 180 օրվա ընթացքում վերահսկման միջոցառումի կամ միջոցառումների բացառումը դադարեցնելու համար:

#### *Հոդված 4*

ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՅԼ ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ցանկ I նշված նյութերից բացի այլ հոգեմետ նյութերի համար Կողմերը կարող են թույլատրել՝

- a) Անձնական օգտագործման համար պատրաստուկների փոքր քանակությունների կրում միջազգային ճանապարհորդների կողմից: Սակայն յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի ճշտելու, որ այս պարտաստուկները ձեռք են բերվել օրինական ճանապարհով,
- b) ոչ հոգեմետ նյութերի կամ ապրանքների արտադրության համար այսպիսի նյութերի օգտագործումը, ենթակա սույն Կոնվենցիայով պահանջվող վերահսկման միջոցառումների կիրառման, եթե հոգեմետ նյութերը այն վիճակում չեն գտնվում, որ կարող են չարաշահման համար օգտագործվել կամ պարտաստուկից առանձնացվել,
- c) այնպիսի նյութերի օգտագործումը, ենթակա սույն Կոնվենցիայով պահանջվող վերահսկման միջոցառումների կիրառման, որոնք օգտագործվում են կենդանիներին բռնելու համար այսպիսի նյութի օգտագործման համապատասխան մարմիններից թույլատվություն ստացած անձանց կողմից:

#### *Հոդված 5*

### **ԲԺՇԿԱԿԱՆ և ԳԻՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ**

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է սահմանափակի Ցանկ I նյութերի օգտագործումը Հոդված 7 սահմանվածով:
2. Յուրաքանչյուր Կողմ, բացառությամբ Հոդված 4 սահմանածի, պետք է սահմանափակի Ցանկեր II, III և IV նյութերի արտադրությունը, արտահանումը, բաշխումը, պահեստավորումը, վաճառքը, օգտագործումը և տիրապետումը բժշկական և գիտական նպատակներով:
3. Ցանկալի է, որ Կողմերը թույլ չտան Ցանկեր II, III և IV նյութերի տիրապետումը՝ բացառությամբ օրենքով սահմանված կարգերի:

#### *Հոդված 6*

### **ՀԱՏՈՒԿ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Ցանկալի է, որ սույն Կոնվենցիայի դրույթների կիրառման համար, յուրաքանչյուր կողմ հատուկ վարչարարություն սահմանի և շահագործի, որը կարող է նույն նպատակի համար հաջողությամբ համագործակցել թմրամիջոցների վերահսկման համար կոնվենցիաների դրույթներն իրականացնող հատուկ վարչարարության մարմինների հետ:

#### *Հոդված 7*

### **ՑԱՆԿ I ՆՅՈՒԹԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒԹՅՆԵՐ**

Ցանկ I նյութերի առումով Կողմերը պետք է՝

- a) համապատասխան մարմինների միջոցով արգելեն նյութերի ցանկացած գործածում, բացի գիտական և շատ սահմանափակ բժշկական նպատակներով օգտագործվող նյութերի՝ բժշկական կամ գիտական

հաստատություններում, որոնք իրենց Կառավարությունների անմիջական վերահսկման ներքո են կամ հատուկ կերպով հաստատվել են նրանց կողմից,

b) պահանջեն, որպեսզի նյութերի արտադրումը, առևտուրը, բաշխումը և տիրապետումը լինի հատուկ լիցենզիայով կամ նախնական թույլատվությամբ,

c) պարբերություններ *a)* և *b)* նշված գործունեությունների և ակտերի համար խիստ վերահսկում սահմանել,

d) համապատասխան անձանց տրամադրվելիք քանակը սահմանափակեն այդ նպատակի համար միայն սահմանված քանակով,

e) պահանջեն, որպեսզի գիտական և բժշկական գործունեությամբ զբաղվողները գրանցեն ձեռք բերված նյութերը և դրանց օգտագործման մանրամասները, այսպիսի գրանցումները պահեն վերջին գրանցումից հետո առնվազն երկու տարի և

f) արգելեն արտահանումն ու ներմուծումը, բացառությամբ այն դեպքերի, երբ արտահանողն ու ներմուծողը արտահանման և ներմուծման երկրների համապատասխան մարմիններն ու գործակալություններն են կամ հանդիսանում են տվյալ երկրի համապատասխան մարմինների կողմից լիազորված մարմիններ: Ցանկ II նյութերի արտահանման և ներմուծման Հոդված 12 պարբերություն 1 դրույթները պետք է կիրառվեն նաև Ցանկ I նյութերի հանդեպ:

## *Հոդված 8* ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ

1. Կողմերը պետք է պահանջեն, որ Ցանկեր II, III և IV նշված նյութերի արտադրությունը, վաճառքը (ներառյալ արտահանման և ներմուծման առևտուրը) և բաշխումը կատարվի լիցենզիայով կամ նմանատիպ վերահսկման այլ միջոցով:

2. Կողմերը պետք է՝

a) Վերահսկեն պարբերություն 1 նշված նյութերի արտադրություն, վաճառք (ներառյալ արտահանման և ներմուծման առևտուրը) և բաշխում իրականացնող կամ դրանցում ներգրավված լիազորված անձանց և ձեռնարկություններին,

b) Վերահսկեն լիցենզավորված կամ վերահսկման այլ միջոցառումներով արտադրություն, վաճառք կամ բաշխում կատարող ձեռնարկությունները և շենքային պայմանները և

c) Ապահովեն, որ այսպիսի ձեռնարկությունների և շենքային պայմանների հանդեպ կիրառվեն անվտանգության միջոցառումներ, որպեսզի կանխարգելվեն պահուստների գողությունն ու այլ շեղումները:

3. Սույն Հոդվածի պարբերություններ 1 և 2 դրույթները, կապված լիցենզավորման կամ վերահսկման այլ միջոցառումների հետ, չեն կիրառվում համապատասխան կերպով լիազորված անձանց հանդեպ, որոնք թերապևտիկ և այլ գիտական ֆունկցիաներ են իրականացնում:

4. Կողմերը պետք է պահանջեն, որպեսզի սույն Կոնվենցիայի համաձայն, լիցենզիաներ ստացող բոլոր անձինք կամ սույն Հոդվածի պարբերություն 1 կամ Հոդված 7 ենթապարբերություն *b)* համաձայն լիազորված համապատասխան որակավորումներ

ունենան այսպիսի օրենքների և կանոնակարգերի արդյունավետ և արդարացի իրականացման համար, որոնք ուժի մեջ են մտնում համաձայն սույն Կոնվենցիայի:

### *Հոդված 9*

#### ԴԵՂԱՏՈՄՍԵՐ (ԴՈՒՐՍ ԳՐՈՒՄՆԵՐ)

1. Կողմերը պետ է պահանջեն, որպեսզի Ցանկեր II, III և IV նյութերը անհատների օգտագործման համար մատակարարվեն կամ բաշխվեն միայն դեղատոմսերի դուրս գրմամբ, բացառությամբ երբ անհատները օրինականորեն են ձեռք բերում, օգտագործում, բաշխում կամ տնօրինում այս նյութերը՝ թերապևտիկ կամ գիտական ֆունկցիաները իրականացնելու լիազորված գործունեությունների համար:
2. Կողմերը պետք է միջոցառումներ ձեռնարկեն, որպեսզի ապահովեն, որ Ցանկեր II, III և IV նյութերի դեղատոմսերը դուրս գրվեն համաձայն բժշկական գործառույթների և ենթարկվեն այսպիսի կանոնակարգումների, մասնավորապես պետք է մատնանշվեն քանի անգամ դրանք կարող են վերալցվել և դրանց պահպանման ժամկետը, որպեսզի պահպանվեն հանրային առողջությունն ու բարեկեցությունը:
3. Պարբերություն 1-ից անկախ՝ Կողմը կարող է, եթե ըստ նրա տեղական հանգամանքները պահանջում են, դեղատոմս դուրս գրել, լիազորել լիցենզավորված դեղագործներին և կամ այլ լիցենզավորված մանրածախ բաշխողներին, նշված տվյալ երկրում կամ դրա մի մասում հանրային առողջապահության համար պատասխանատու մարմինների կողմից, որպեսզի վերջիններս իրենց հայեցողությամբ և առանց դեղատոմսի, բացառիկ դեպքերում անհատների բժշկական նպատակների համար փոքր քանակություններով և Կողմերի սահմանած չափաբաժիններով օգտագործել Ցանկեր III և IV նշված նյութերը:

### *Հոդված 10*

#### ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿՐԱ և ԳՈՎԱԶԴ

1. Հաշվի առնելով Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության համապատասխան կանոնակարգերը և առաջարկությունները՝ յուրաքանչյուր կողմ կարող է պահանջել, օգտագործման համար այնպիսի ուղղորդումներ, ներառյալ զգուշացումներն ու զգուշավորությունները, որոնք պետք է նշվեն հոգեմետ նյութերի փաթեթների պիտակների վրա և դրանց ուղեկցող թռուցիկների մեջ և որոնք ըստ վերջինիս անհրաժեշտ են օգտագործողի անվտանգության համար:
2. Հաշվի առնելով սեփական սահմանադրական դրույթները՝ յուրաքանչյուր Կողմ պարտավոր է արգելել այսպիսի նյութերի գովազդը հանրային վայրերում:

### *Հոդված 11*

#### ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐ

1. Կողմերը պետք է պահանջեն, որպեսզի Ցանկ I նյութերի առումով վաճառք և բաշխում կատարող արտադրողներն ու Հոդված 7-ով լիազորված անձինք գրանցումներ ունենան, սահմանված յուրաքանչյուր Կողմի կողմից՝ ցույց տալով արտադրվածի քանակների, պահեստի քանակություններն ու յուրաքանչյուր ձեռքբերման և բաշխման համար քանակի, ամսաթվի, մատակարարի և ստացողի մանրամասն տվյալները:

2. Կողմերը պետք է պահանջեն, որպեսզի Ցանկ II և III նյութերի առումով արտադրողները, մեծածախ բաշխողները, արտահանողներն ու ներմուծողները գրանցումներ ունենան, սահմանված յուրաքանչյուր Կողմի կողմից՝ ցույց տալով արտադրվածի քանակների, պահեստի քանակություններն ու յուրաքանչյուր ձեռք բերման և բաշխման համար քանակի, ամսաթվի, մատակարարի և ստացողի մանրամասն տվյալները:

3. Կողմերը պետք է պահանջեն, որպեսզի Ցանկ II նյութերի առումով մանրածախ բաշխողները, հիվանդանոցային ու առողջապահական հաստատություններն ու գիտական հաստատությունները գրանցումներ ունենան, սահմանված յուրաքանչյուր Կողմի կողմից՝ ցույց տալով յուրաքանչյուր ձեռք բերումն ու բաշխումը, քանակի, ամսաթվի, մատակարարի և ստացողի մանրամասն տվյալները:

4. Համապատասխան մեթոդներով և հաշվի առնելով իրենց երկրների մասնագիտական և վաճառքի փորձերը՝ Կողմերը պետք է ապահովեն, որ մանրածախ առաքողների, հիվանդանոցային և առողջապահական հաստատությունների և հիտական հաստատությունների կողմից կատարվող Ցանկ III սահմանված նյութերի ձեռք բերման և բաշխման մասին տեղեկատվությունը մատչելի լինի:

5. Կողմերը պետք է պահանջեն, որ Ցանկ IV մեջ նշված նյութերի առումով, արտադրողները, արտահանողներն ու ներմուծողները, սահմանված յուրաքանչյուր Կողմի կողմից, ցույց տան արտադրված, արտահանված և ներմուծված քանակները:

6. Կողմերը պետք է պահանջեն, որ Հոդված 3 պարբերություն 3 բացառված պատրաստուկների արտադրողները գրանցումներ պահեն բացառված յուրաքանչյուր պատրաստուկի արտադրությունում օգտագործվող հոգեմետ նյութի մասին և այդ արտադրված բացառված պատրաստուկի բնույթի, ընդհանուր քանակության և սկզբնական բաշխման մասին:

7. Կողմերը պետք է ապահովեն, որ սույն Հոդվածում նշված գրանցումներն ու տեղեկատվությունը, որոնք պահանջվում են Հոդված 16 սահմանված հաշվետվությունների նպատակների համար, պահվեն առնվազն երկու տարի:

## Հոդված 12

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԽՏՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. a) Ցանկ I կամ II նյութերի արտահանում կամ ներմուծում թույլատրող ցանկացած Կողմ պետք է պահանջի արտահանման և ներմուծման առանձին թույլատվություն, Հանձնաժողովի կողմից սահմանված ձևով, որը պետք է ձեռք բերվի յուրաքանչյուր արտահանման կամ ներմուծման համար՝ բաղկացած լինի մեկ կամ ավել նյութերից:

b) Այսպիսի թույլատվությունը պետք է հստակորեն նշի միջազգային ոչ սեփականական անվանումը կամ այսպիսի անվանման բացակայության դեպքում, Ցանկի նյութի վերջնակետը, ներմուծվող կամ արտահանվող քանակը, դեղագործական ձևը, արտահանողի կամ ներմուծողի անունն ու հասցեն և այն ժամանակահատվածը, երբ այդ արտահանումը կամ ներմուծումը պետք է կատարվի: Եթե նյութը արտահանվում կամ ներմուծվում է պատրաստուկի տեսքով, ապա պատրաստուկի անվանումը պետք է լրացուցիչ տրամադրվի: Արտահանման թույլատվությունը պետք է հստակորեն նշի նաև ներմուծման թույլատվության համարն ու ամսաթիվը և այն մարմինը, որի կողմից այն տրվել է:

- c) Արտահանման թույլատվություն տալուց առաջ Կողմերը պետք է պահանջեն ներմուծող երկրի կամ շրջանի համապատասխան մարմնի կողմից տրված ներմուծման թույլատվություն և հաստատում, որ սույն նյութի կամ նյութերի ներմուծումը հաստատված է և այսպիսի թույլատվությունը պետք է ներկայացվի արտահանման թույլատվության դիմած անձի կամ հաստատության կողմից:
- d) Յուրաքանչյուր առաքում պետք է ունենա արտահանման թույլատվություն և արտահանման թույլատվություն տված Կառավարությունը պետք է սույն փաստաթղթի մի օրինակ ուղարկի ներմուծող երկրի կամ տարածքի Կառավարությանը:
- e) Ներմուծող երկրի կամ շրջանի Կառավարությունը, ներմուծումից հետո, արտահանող երկրի կամ շրջանի Կառավարությանը պետք է վերադարձնի արտահանման թույլատվությունը՝ հաստատելով փաստացի ներկրված քանակի չափը:
2. a) Կողմերը պետք է պահանջեն, որ Ցանկ III նյութերի յուրաքանչյուր արտահանում պետք է ունենա երեք օրինակից մի հայտարարագիր, Հանձնաժողովի կողմից հաստատված ձևով, պարուակելով հետևյալ տեղեկությունները՝
- i) Արտահանողի և ներմուծողի անունն ու հասցեն,
  - ii) Միջազգային ոչ սեփականատիրական անվանումը կամ այսպիսի անվանման բացակայության դեպքում Ցանկի նյութերի նշանակությունը,
  - iii) Քանակը և դեղագործական ձևը, որով նյութը արտահանվում է և պատրաստուկի պարագայում պատրաստուկի անվանումը և
  - iv) Առաքման օրը:
- b) Արտահանողները պետք է տրամադրեն իրենց երկրի կամ շրջանի համապատասխան մարմնին ներկայացնեն հայտարարագրի երկու օրինակներ: Երրորդ օրինակը նրանք պետք է կցեն առաքմանը:
- c) Կողմը, որի տարածքից Ցանկ III նշված նյութեր են արտահանվել, պետք է հնարավորինս շուտ, բայց առաքումից իննսուն օր ոչ ուշ, ներմուծող երկրի կամ շրջանի համապատասխան մարմնին պատվիրված փոստով ուղարկի արտահանողից ստացված հայտարարագրի մի օրինակ:
- d) Կողմերը կարող են պահանջել, որ առաքումը ստանալուց, ներմուծողը պետք է առաքման հետ եղած փաստաթերթի մի օրինակը, ստացված քանակների և ամսաթվի մասին տեղեկատվությամբ, փոխանցի իր երկրի կամ շրջանի համապատասխան մարմիններին:
3. Ցանկ I և II նյութերի առումով պետք է կիրառվեն հետևյալ լրացուցիչ դրույթները՝
- a) Ազատ նավահանգիստներում և գոտիներում Կողմերը պետք է կիրառեն նույն վերահսկումն և ստուգումը, ինչ որ իրենց տարածքի այլ մասերում, սակայն, հաշվի առնելով, որ կարող են նաև ավելի խիստ միջոցառումներ կիրառել:
  - b) Արտահանումը փոստային գրասենյակների, արտահանման թույլատվությունից բացի այլ անձի անունով բանկային հաշվի միջոցով պետք է արգելվի:
  - c) Ցանկ I նյութերի արտահանումը գրավի պահեսներ արգելվում է: Ցանկ II նյութերի արտահանումը գրավի պահեսներ արգելվում է, եթե ներմուծող

երկրի Կառավարությունը չի հաստատում արտահանման թույլատվության համար դիմած անձի կամ հաստատության կողմից ներկայացրած ներմուծման թույլատվությունը, առ այն որ նա հաստատել է ներմուծումը գրավի պահեստներում տեղակայելու համար: Այս դեպքում արտահանման թույլատվությունը պետք է հաստատի, որ արտահանումը կատարվում է այս նպատակով: Գրավի պահեստից յուրաքանչյուր առհաում պետք է պահանջի գրավի պահեստի ղեկավարության թույլատվություն և օտարերկրյա պետության պարագայում այն պետք է դիտարկվի, որպես սույն Կոնվեցիայի նշանակության մի նոր արտահանում:

d) Կողմի տարածք մտնող կամ դուրս եկող առաքումները, որոնք չեն ուղեկցվում արտահանման թույլատվությամբ պետք է կալանքի տակ վերցվեն համապատասխան մարմինների կողմից:

e) Կողմը չպետք է թույլատրի այլ պետություն առաքելու համար նախատեսված ցանկացած նյութի անցումը սեփական տարածքով, անկախ այն բանից թե այդ առաքումը հանված է դա փոխանցող տրանսպորտային միջոցից թե ոչ, եթե այս Կողմի համապատասխան մարմիններին չի ներկայացվել առաքման արտահանման թույլատվությունը:

f) Ցանկացած երկրի կամ շրջանի համապատասխան մարմինները, որի միջով թույլատրված է նյութերի առաքումը, պետք է համապատասխան միջոցառումներ ձեռնարկեն, որպեսզի կանխարգելեն այդ առաքման շեղումը սկզբնական ուղղությունից, եթե արտահանման թույլատվության ուղեկցող փաստաթղթերի մեջ այլ բան նշված չէ, եթե այն երկրի կամ շրջանի Կառավարությունը, որի միջով անցնում է առաքումը, չի լիազորում շեղումը: Տարանցիկ երկրի կամ շրջանի Կառավարությունը պետք է շեղման ցանկացած հարցման վերաբերի այնպես, ասես դա տարանցիկ երկրից կամ շրջանից արտահանում է նոր նշանակման երկիր կամ շրջան: Եթե շեղումը թույլատրված է, ապա պարբերություն 1 e) դրույթները պետք է կիրառվեն տարանցիկ երկրների կամ շրջանի և երկրի կամ շրջանի միջև, որոնք սկզբնականորեն արտահանել են առաքումը:

g) Տարանցիկ վայրում կամ գրավի պահեստում գտնվող առաքման ոչ մի նյութ չի կարող ենթարկվել տվյալ նյութի բնույթը փոփոխող ոչ մի գործընթացի: Առանց համապատասխան մարմինների թույլատվության փաթեթավորումը չի կարող փոխվել:

h) Կողմի տարածքով նյութի անցմանը վերաբերող ենթապարբերություններ *e)-ից g)* դրույթները չեն կիրառվում, երբ տվյալ առաքումը կատարվում է օդանավով, որը վայրէջք չի կատարում տարանցիկ երկրում կամ շրջանում: Եթե օդանավը վայրէջք է կատարում այսպիսի երկրում կամ տարածքում, ապա այդ դրույթները կիրառվում են, ինչպես կպահանջեն հանգամանքները:

i) Սույն պարբերության դրույթները կիրառվում են առանց ի վնաս այն միջազգային համաձայնագրերի, որոնք սահմանափակում են այսպիսի նյութերի ցանկացած Կողմի կիրառվող ստուգումները:

### Հոդված 13

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ և ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԱՐԳԵԼՈՒՄՆ ՈՒ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿՈՒՄԸ

1. Գլխավոր Քարտուղարի միջոցով Կողմը կարող է տեղյակ պահել բոլոր այլ Կողմերին, որ արգելում է սեփական երկիր կամ իր մեկ կամ ավել տարածքները ներմուծել Ցանկ II, III և IV նյութերը՝ մասնավորեցնելով դրանք իր ծանուցման մեջ: Ցանկացած այսպիսի ծանուցում պետք է նշի Ցանկ II, III և IV նյութերի անվանումները:
2. Եթե Կողմը ծանուցվել է պարբերություն 1 սահմանված արգելանքի մասին, ապա այն պետք է ձեռնարկի համապատասխան միջոցառումները, որպեսզի ապահովի, որ ծանուցման մեջ նշված նյութերից ոչ մեկը չարտահանվի ծանուցում կատարած Կողմի երկիր կամ տարածքներից մեկը:
3. Անկախ նախորդ պարբերությունների դրույթներից՝ Կողմը, որը համաձայն պարբերություն 1 ծանուցում է տվել, կարող է այսպիսի նյութեր պարունակող պատրաստուկների կամ տվյալ նյութերի արտահանման կոնկրետ քանակների յուրաքանչյուր դեպքի համար թույլատրել հատուկ լիցենզիա: Ներմուծող երկրի թույլատրող մարմինը պետք է հատուկ ներմուծման լիցենզիայի երկու օրինակ, արտահանողի և ներմուծողի անվամբ և հասցեով, ուղարկի արտահանող երկրի կամ շրջանի համապատասխան մարմնին, որը դրանից հետո կարող է լիազորել արտահանողին կատարել առաքումը: Առաքումը պետք է ուղեկցվի հատուկ ներմուծման, լիցենզիայով՝ արտահանող երկրի կամ շրջանի համապատասխան մարմնի կողմից հաստատված:

*Հոդված 14*

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎԿԱԾ ՆԱԿԵՐՈՎ, ՕՂԱՆԱԿԵՐՈՎ  
ԵՎ ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ  
ԱՐԿԴԻԿՆԵՐՈՒՄ ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ՓՈԽԱՂՈՄԱՆԸ ԿԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՏՈՒԿ  
ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ցանկ II, III կամ IV նյութերի այսպիսի սահմանափակ քանակությունների միջազգային փոխադրումը նավերով, օդանավերով և միջազգային հասարակական տրանսպորտի այլ միջոցներով, ինչպիսիք են միջազգային երկաթուղային գնացքներն ու ավտոբուսները, քանզի հնրարավոր է որ դրանք պետք է գան ճանապարհորդության ընթացքում առաջին օգնության նպատակներով կամ արտակարգ իրավիճակներում, չպետք է դիտարկվեն, որպես սույն Կոնվեցիայի իմաստով արտահանում, ներմուծում կամ երկրի տարածքով փոխադրում:
2. Գրանցման երկրի կողմից համապատասխան անվտանգության միջոցներ պետք է ձեռնարկվեն պարբերություն 1 նշված նյութերի ոչ տեղին օգտագործումը կամ դրանց բաշխումը ապօրինի նպատակներով: Համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ խորհրդակցելով՝ Հանձնաժողովը պետք է անվտանգության այսպիսի միջոցներ առաջարկի:
3. Համաձայն պարբերություն 1 նավերով, օդանավերով և միջազգային հասարակական տրանսպորտի այլ միջոցներով, ինչպիսիք են միջազգային երկաթուղային գնացքներն ու ավտոբուսները, փոխադրվող նյութերը պետք է ենթարկվեն գրանցման երկրի օրենքներին, կանոնակարգերին, թույլատվություններին և լիցենզիաներին՝ առանց հակասելով համապատասխան տեղական մարմինների այսպիսի առաքումների ստուգումներ, տեսչություններ և վերահսկման այլ միջոցառումներ կատարելու իրավունքներին: Արտակարգ իրավիճակներում այս նյութերի գործածումը չպետք է դիտարկվի որպես Հոդված 9 պարբերություն 1 պահանջների օրինախախտում:

*Հոդված 15*  
ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Կողմը պետք է ունենա հոգեմետ նյութերի արտադրողների, արտահանողների, ներմուծողների, մեծածախ և մանրածախ վաճառողների ու այսպիսի նյութեր օգտագործող բժշկական և գիտական հաստատությունների տեսչության համակարգ: Դրանք պետք է շենքային պայմանների և պահուստների ու գրանցումների ըստ իրենց հայեցողության հաճախակի տեսչություններ իրականացնեն:

*Հոդված 16*  
ԿՈՂՄԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Կողմերը պետք է Հանձնաժողովի պահանջած տեղեկատվությունը, տրամադրեն Գլխավոր Քարտուղարին, որը անհրաժեշտ կլինի Հանձնաժողովի ֆունկցիաների իրականացման համար: Այսպիսի տեղեկատվությունը մասնավորապես ներառում է Կողմի տարեկան հաշվետվություն, իր տարածքում Կոնվենցիայի կիրառման մասին, պարունակելով տեղեկատվություն հետևյալի մասին`

- a) հոգեմետ նյութերի մասին օրենքների և կանոնակարգերի կարևոր փոփոխությունները և
- b) իրենց տարածքում հոգեմետ նյութերի չարաշահման և ապօրինի շրջանառության նկատելի զարգացումները:

2. Գլխավոր Քարտուղարին կողմերը պետք է տեղյակ պահեն նաև Հոդված 7 ենթապարբերություն *բ*), Հոդված 12 և Հոդված 13 պարբերություն 3 նշված կառավարման մարմինների անվանումների և հասցեների մասին: Այս տեղեկատվությունը Գլխավոր Քարտուղարի միջոցով փոխանցվում է բոլոր Կողմերին:

3. Կողմերը պետք է հնարավորինս շուտ Գլխավոր Քարտուղարին ներկայացնեն հաշվետվություն հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության և այսպիս ապօրինի շրջանառությունից կատարված ազդրավման մասին, որն ըստ նրանց կարևոր է որովհետև`

- a) նոր միտումներ են բացահայտվել,
- b) ներգրավված քանակները,
- c) լույս է սփռվել այն աղբյուրների վրա, որոնցից նյութերն են ձեռք բերվել կամ
- d) ապօրինի շրջանառությամբ զբաղվողների ձեռնարկված միոցառումներին հետամուտ պետք է լինել:

Հաշվետվության պատճենները պետք է փոխանցվեն համաձայն Հոդված 21 ենթապարբերություն *բ*):

4. Կողմերը պետք է Տնօրենների Խորհրդին ներկայացնեն տարեկան վիճակագրական հաշվետվություններ` Տնօրենների Խորհրդի կողմից պատրաստված ձևի համաձայն`

- a) Ցանկ I և II նյութերի առումով` յուրաքանչյուր երկրից կամ տարածքից արտահանված կամ այնտեղ ներմուծված և արտադրված քանակների մասին, ինչպես նաև արտադրողների պահուստների մասին,
- b) Ցանկ III և IV յուրաքանչյուր նյութի համար` արտադրված քանակությունների, ինչպես նաև արտահանված և ներմուծված ընդհանուր քանակությունների մասին,

- c) Ցանկ II և III յուրաքանչյուր նյութի համար` բացառված պատրաստուկների արտադրությունում օգտագործված քանակների մասին և
- d) Ցանկ I նյութերից բացի այլ նյութերի համար` համաձայն Հոդված 4 ենթապարբերություն b) արդյունաբերական նպատակներով օգտագործված քանակների մասին:

Սույն պարբերության ենթապարբերություններ a) և b) նշված արտադրված քանակները չեն ներառում արտադրված պատրաստուկների քանակները:

5. Տնօրենների Խորհրդի հարցումով` Կողմը ինքը պետք է ներկայացնի ամեն երկրից կամ տարածքից արտահանված կամ այնտեղ ներմուծված Ցանկեր III և IV յուրաքանչյուր առանձին նյութի քանակության ապագա ժամանակահատվածի մասին լրացուցիչ վիճակագրական տեղեկատվություն: Կողմը կարող է խնդրել, որ Տնօրենների Խորհուրդը գաղտնի վերաբերվի սույն պարբերությամբ տրամադրված և հարցված տեղեկությունների հանդեպ:

6. Հանձնաժողովի կամ Տնօրենների Խորհրդի հարցումով` Կողմերը պետք է վերջիններիս սահմանված կարգով և ժամանակին տրամադրեն նրանց պարբերություններ 1 և 4 տեղեկատվությունը:

#### *Հոդված 17*

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

1. Հանձնաժողովը կարող է դիտարկել սույն Կոնվենցիայի նպատակների և դրա դրույթների իրականացմանը վերաբերող բոլոր հարցերը և դրանց հետ կապված կարող է առաջարկություններ ներկայացնել:
2. Հոդվածներ 2 և 3 սահմանված Հանձնաժողովի որոշումները պետք է ընդունվեն Հանձնաժողովի անդամների երկու երրորդ մեծամասնությամբ:

#### *Հոդված 18*

### ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Տնօրենների Խորհուրդը պետք է տարեկան հաշվետվություններ պատրաստի իր աշխատանքի մասին, որը պետք է պարունակի իր տրամադրության տակ եղած վիճակագրական տեղեկատվության վերլուծությունը և համապատասխան դեպքերում Կառավարությունների տրված կամ նրանց կողմից պահանջված բացատրությունները` Տնօրենների Խորհրդի կողմից կատարված ցանկացած առաջարկություններով և դիտողություններով: Տնօրենների Խորհուրդը կարող է լրացուցիչ հաշվետվություններ իրականացնել, եթե անհրաժեշտ գտնի: Հաշվետվությունները պետք է ներկայացվեն Խորհրդին Հանձնաժողովի միջոցով, որը կարող է մեկնաբանություններ անել:
2. Տնօրենների Խորհրդի հաշվետվությունները պետք է Կողմերին փոխանցվեն և հետագայում հրապարակվեն Գլխավոր Քարտուղարի կողմից: Կողմերը պետք է թույլատրեն դրա անսահմանափակ բաշխումը:

#### *Հոդված 19*

### ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂԴԱԾ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՆԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՈՒՄՆԵՐԸ

1. a) Եթե կառավարությունների կողմից Տնօրենների Խորհրդին տրամադրված տեղեկատվության քննության կամ Միացյալ Ազգերի մարմինների ներկայացրած տեղեկատվության հիման վրա Տնօրենների Խորհուրդը հիմքեր ունի հավատալու, որ սույն Կոնվենցիայի նպատակները լրջորեն վտանգվում են երկրի կամ տարածքի սույն Կոնվենցիայի դրույթների չկատարման պատճառով, ապա Տնօրենների Խորհուրդին իրավունք է վերապահվում բացատրություններ պահանջել տվյալ երկիր կամ շրջանի Կառավարությունից: Տնօրենների Խորհուրդի իրավունքն է Կողմերի, Խորհրդի և Հանձնաժողովի ուշադրությունը գրավել ստորև բերված ենթապարբերություն *Ե)* նշված հարցի վրա: Սույն ենթապարբերությամբ տրամադրված տեղեկատվությանը կամ բացատրությանը Տնօրենների Խորհուրդը պետք է վերաբերվի գաղտնիությամբ:
  - b) Ենթապարբերություն *ա)* նախատեսված գործողություններ ձեռնարկելուց հետո Տնօրենների Խորհուրդը, եթե դրանով բավարարվում է, կարող է կոչ անել տվյալ Կառավարությանը ընդունել ուղղման այնպիսի գործողություններ, որոնք տվյալ հանգամանքների ներքո կարող են անհրաժեշտ թվալ սույն Կոնվենցիայի դրույթների իրականացման համար:
  - c) Եթե Տնօրենների Խորհուրդը գտնում է, որ տվյալ Կառավարությունը չի կարողացել ենթապարբերություն *ա)* նախատեսված բավարար բացատրություններ տալ կամ չի կարողացել ընդունել ենթապարբերություն *բ)* նախատեսված ուղղման միջոցառումներ ձեռնարկել, ապա այն կարող է Խորհրդի և Հանձնաժողովի ուշադրությունը գրավել այս հարցի շուրջ:
2. Կողմերի, Խորհրդի և Հանձնաժողովի ուշադրությունը գրավելով պարբերություն 1 *Ե)* սահմանված հարցի շուրջ՝ 1 Տնօրենների Խորհուրդը կարող է, եթե այսպիսի միջոցն անհրաժեշտ է գտնում, առաջարկել Կողմերին, որ Կողմերը դադարեցնեն հոգեմետ նյութերի արտահանումը, ներմուծումը կամ երկուսն էլ տվյալ երկիր կամ շրջան կամ որոշ ժամանակով կամ մինչև Տնօրենների Խորհուրդը չբավարարվի տվյալ երկրում կամ շրջանում տիրող իրավիճակով: Տվյալ Պետությունը կարող է հարցը բարձրացնել Խորհրդի առջև:
3. Տնօրենների Խորհուրդը իրավունք ունի սույն Հոդվածի դրույթներին վերաբերող հարցերի մասին հաշվետվություն հրապարակել և փոխանցել դա Խորհրդին, որը կփոխանցի դա Կողմերին: Եթե Տնօրենների Խորհուրդը այս հաշվետվությունում հրապարակում է սույն Հոդվածով կայացրած որոշումը կամ դրան վերաբերող ցանկացած տեղեկատվություն, ապա այն պետք է հրապարակի նաև տվյալ Կառավարության տեսակետը, եթե վերջինս այսպես է պահանջում:
4. Եթե սույն Հոդվածով նախատեսված Տնօրենների Խորհրդի որոշումը միաձայն չէ, ապա փոքրամասնության կարծիքները պետք է հրապարակվեն:
5. Ցանկացած Պետություն, որն անմիականորեն շահագրգռված է սույն Հոդվածով քննարկվելիք հարցով, պետք է հրավիրվի Տնօրենների Խորհրդին ժողովներին:
6. Սույն Հոդվածով նախատեսված որոշումները պետք է կայացվեն Տնօրենների Խորհրդի ընդհանուր թվի երկու երրորդ մեծամասնությամբ:
7. Վերոհիշյալ պարբերությունների դրույթները կիրառվում են նաև, եթե Տնօրենների Խորհուրդը պատճառներ ունի հավատալու, որ սույն Կոնվենցիայի նպատակները լրջորեն վտանգվել են, որպես Կողմի Հոդված 2 պարբերություն 7 սահմանված կայացրած որոշման արդյունք:

### Հոդված 20

#### ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԶԱՐԱՀԱՀՄԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1. Կողմերը պետք է գործնական միջոցառումներ ձեռնարկեն հոգեմետ նյութերի չարաշահումն կանխարգելելու համար և ներգրավված անձանց վաղ բացահայտման, բուժման, կրթման, ետբուժման, վերականգնման և սոցիալական վերաինտեգրացման համար և պետք է համակարգեն իրենց ջանքերն այս ուղղությամբ:
2. Կողմերը պետք է հնարավորինս խթանեն հոգեմետ նյութերի չարաշահողների բուժմամբ, ետբուժմամբ, վերականգնմամբ և սոցիալական վերաինտեգրացմամբ զբաղվող մասնագետների վերապատրաստումը:
3. Կողմերը պետք է աջակցեն նրանց, որոնց աշխատանքը պահանջում է հոգեմետ նյութերի չարաշահողների խնդիրների և դրանց կանխարգելման մասին հասկացություն ունենալ և պետք է այսպիսի ընթրումը խթանեն նաև ընդհանուր հասարակության մեջ, եթե վտանգ կա, որ այսպիսի նյութերի չարաշահումը լայնածավալ կլինի:

### Հոդված 21

#### ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐՈԾՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվի առնելով սեփական սահմանադրական, իրավական և վարչական համակարգերը՝ Կողմերը պետք է՝

- a) Ապօրինի շրջանառության դեմ կանխարգելիչ և ճնշող գործողությունների համակարգման միջոցառումներ ձեռնարկեն ազգային մակարդակով: Այս համակարգման համար նրանք կարող են նշանակել մի համապատասխան գործակալություն,
- b) Աջակցեն միմյանց հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարում և մասնավորապես դիվանագիտական կապերով կամ այս նպատակի համար Կողմերի նշանակված համապատասխան մարմինների միջոցով անմիջականորեն շահագրգռված Կողմից փոխանցելով Հոդված 16 սահմանված ապօրինի շրջանառության կամ առգրավման դեպքերի բացահայտման մասին Գլխավոր Քարտուղարին հասցեագրած ցանկացած հաշվետվություն,
- c) Սերտորեն համագործակցեն միմյանց և համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ, որոնց անդամ հանդիսանում են՝ փորձելով համակարգված մոտեցում ցուցաբերել ապօրինի շրջանառության դեմ պայքարում,
- d) Ապահովեն, որպեսզի համապատասխան գործակալությունների միջև միջազգային համագործակցությունը կատարվում է արագ կերպով և
- e) Ապահովեն, որպեսզի դատական ընթացակարգերի համար փոխանցվող փաստաթղթերի պարագայում, այդ փոխանցումը արագ կերպով ուղղվի համապատասխան Կողմին. սույն պահանջը պետք է կատարվի առանց վնասելու Կողմի իրավունքը, որով վերջինս կարող է պահանջել իրավական փաստաթղթերի ուղարկումը դիրվանագիտական ուղիներով:

### Հոդված 22

#### ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. a) Իր սահմանադրական սահմանափակումներին ենթակա՝ յուրաքանչյուր Կողմ պետք է պատժելի օրինախախտում համարի, երբ սույն Կոնվենցիայի սեփական պարտավորությունները կատարելու համար ընդունված օրենքին կամ կանոնակարգին հակասող միջազգային գործողություն է կատարվել և պետք է ապահովի, որ լուրջ օրինախախտումները պետք է համապատասխան պատիժների արժանանան՝ մասնավորապես բանտարկում կամ ազատազրկման այլ պատժամիջոցներ:

b) Նախկին պարբերությունից անկախ, երբ հոգեմետ նյութերի չարաշահողները այսպիսի օրինախախտումներ են կատարել, Կողմերը կարող են սահմանել, կամ որպես մեղադրանքի կամ պատժի այլընտրանք կամ ի լիրումն մեղադրանքի կամ պատժի, որ այսպիսի չարաշահողները պետք է բուժման, կրթության, ետխնամքի, վերականգնման կամ սոցիալական վերաինտեգրացման ենթարկվեն՝ համաձայն 20 պարբերություն 1:

2. Ենթակա Կողմի սահմանադրական, իրավական համակարգի և ներքին իրավունքի սահմանափակումների՝

a) i) Պարբերություն 1 նշված օրինախախտումներ կազմող փոխկապակցված գործողությունների են կատարվել են տարբեր երկրներում, ապա դրանք պետք է դիտարկվեն, որպես առանձին օրինախախտումներ,

ii) Ցանկացած այսպիսի օրինախախտում գաղտնի կերպով կատարելու կամ կատարելու փորձի, սույն Հոդվածով նախատեսված օրինախախտումների հետ կապված նախապատրաստական գործողությունների և ֆինանսական գործառույթների միջազգային մասնակցությունը պետք է պատժվի՝ պարբերություն 1 սահմանված կարգով,

iii) Այսպիսի օրինախախտումների օտարերկրյա մեղադրանքները պետք է հաշվի առնեն ռեցեդիվիզմի սահմանման նպատակը և

iv) Այսուհետ նշված լուրջ օրինախախտումները, կատարված տեղացիների կամ օտարերկրացիների կողմից, պետք է հետաքննի այն Կողմը, որի տարածքում է կատարվել օրինախախտումը կամ որի տարածքում է գտնվել օրինախախտողը, եթե արտաքսումը ընդունելի չէ՝ համաձայն դիմված Կողմի օրենսդրության և եթե այսպիսի օրինախտող արդեն չի հետաքննվել և դատապարտվել:

b) Ցանկալի է, որպեսզի սույն Հոդվածի պարբերություններ 1 և 2 a) ii) սահմանված յուրաքանչյուր օրինախախտում պետք է դիտարկվի, որպես արտաքսման հանգեցնող օրինախախտում՝ Կողմերի միջև կնքված կամ կնքվող ցանկացած արտաքսման ցանկացած համաձայնագրով սահմանված: Կողմերի միջև եղած համաձայնագրերում արտաքսման պայմանի բացակայության դեպքում այսպիսի օրինախախտումները պետք է դիտարկվեն, որպես արտաքսման ենթակա օրինախախտումներ՝ հաշվի առնելով, որ արտաքսումը պետք է կատարվի դիմված Կողմի օրենքներին համաձայն և որ Կողմերը իրավունք ունեն մերժել ձեռքակալությունը կամ կատարել արտաքսում, եթե համապատասխան մարմինները համարում են որ օրինախախտումը բավարար լուրջ չէ:

3. Ցանկացած հոգեմետ նյութ կամ այլ նյութ, ինչպես նաև ցանկացած սարքավորում, որն օգտագործվել կամ նախատեսված է պարբերություններ 1 և 2 սահմանված օրինախախտումների համար պետք է առգրավվի:

4. Սույն Հոդվածի դրույթները պետք է ենթարկվեն տվյալ Կողմի ներքին օրենքների իրավասություններին:

5. Սույն Հոդվածում պարունակվող ոչ մի դրույթ չպետք է ազդեցություն ունենա այն սկզբունքի վրա, որ խախտումները, որոնք վերաբերում են դրան, պետք է սահմանվեն, հետաքննվեն և պատժվեն՝ համաձայն Կողմի ներքին օրենսդրության:

#### *Հոդված 23*

### ԱՎԵԼԻ ԽԻՍՏ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԻՋՈՂԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ, ՔԱՆ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՎ

Կողմը կարող է ընդունել վերահսկման ավելի խիստ և կոպիտ միջոցառումներ, քան սահմանված է սույն Կոնվենցիայով, եթե ըստ նրա դա ցանկալի կամ անհրաժեշտ է հանրային առողջության կամ բարեկեցության պահպանման համար:

#### *Հոդված 24*

### ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՀԱՑՐԱԾ ԾԱԽՍԵՐԸ

Սույն Կոնվենցիայով նախատեսված իրենց համապատասխան ֆունկցիաները կատարելիս Հանձնաժողովի և Տնօրենների Խորհրդի ծախսերը պետք է արվեն Միացյալ Ազգերի կողմից՝ Գլխավոր Ասամբլեայի որոշված կարգով: Կողմերը, որոնք չեն հանդիսանում Միացյալ Ազգերի Անդամներ, պետք է ներդրում ունենան այս ծախսերում՝ Գլխավոր Ասամբլեայի կողմից որոշված քանակով և այս Կողմերի Կառավարությունների հետ խորհրդակցելուց հետո կատարծ գնահատականներ հիման վրա:

#### *Հոդված 25*

### ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԱՏՈՐԱԳՐՄԱՆ, ՎԱՎԵՐԱՑՄԱՆ, ԸՆԴՈՒՄՄԱՆ ՈՒ ՄՈՒՏՔԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

1. Միացյալ Ազգերի Անդամները, Միացյալ Ազգերի ոչ անդամները, որոնք Միացյալ Ազգերի մասնագիտացված գործակալության կամ Ատոմային Էներգետիկայի Միջազգային Գործակալության անդամներ են կամ Միջազգային Արդարադատության Դատարանի Կանոնադրության Կողմ են կարող են դառնալ սույն Կոնվենցիայի Կողմեր՝

- a) ստորագրելով դա կամ
- b) ստորագրումից հետո վավերացնելով այն կամ
- c) միանալով դրան:

2. Կոնվենցիան բաց է ստորագրման համար մինչև 1972թ. հունվարի 1 ներառյալ: Դրանից հետո այն բաց է ընդունման համար:

2. Վավերացման կամ ընդունման գործիքները պետք է տրամադրվեն Գլխավոր Քարտողարի կողմից:

#### *Հոդված 26*

## ՈՒԺԻ ՄԵԶ ՄՏՆԵԼԸ

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում Հոդված 25 պարբերություն 1 սահմանված պետություններից քառասունի կողմից առանց վավերացման վերապահման վավերացումից ի պահ իննսուն օր անց կամ տրամադրել են վավերացման կամ ընդունման փաստաթուղթը:

2. Նշված քառասուներորդ օրվանից հետո վավերացման կամ ընդունման փաստաթուղթ տրամադրած ցանկացած այլ Պետության առումով՝ սույն Կոնվենցիան պետք է ուժի մեջ մտնի այդ Պետության կողմից վավերացման կամ ընդունման փաստաթղթի տրամադրումից ի պահ իննսուն օր անց:

### *Հոդված 27*

#### ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԻՐԱՌՈՒՄ

Սույն Կոնվենցիան կիրառվում է միջազգային հարաբերությունների բոլոր ոչ-քաղաքային տարածքների համար, որոնց համար Կողմը պատասխանատու է, բացառությամբ այն դեպքերի, երբ այսպիսի տարածքի նախնական համաձայնությունը պահանջվում է Կողմի կամ տարածքի սահմանադրությամբ կամ պահանջվում է սովորույթով: Այս դեպքում Կողմը պետք է ջանա հնարավորինս կարճ ժամանակում ստանալ տարածքի համաձայնությունը և երբ այդպիսի համաձայնություն կա, ապա Կողմը պետք է տեղյակ պահի Գլխավոր Քարտուղարին: Սույն Կոնվենցիան պետք է կիրառվի այն տարածքների կամ տարածքի հանդեպ, որոնք նշված են տեղյակ պահելու գրության մեջ՝ Գլխավոր Քարտուղարի կողմից դրա ստացման ամսաթվից սկսած: Այն դեպքերում, երբ ոչ-քաղաքային տարածքի նախնական համաձայնության կարիք չկա, ապա տվյալ Կողմը ստորագրման, վավերացման կամ ընդունման պահին պետք է հայտարարի այն ոչ-քաղաքային տարածքը կամ տարածքները, որոնց հանդեպ կիրառվում է սույն Կոնվենցիան:

### *Հոդված 28*

#### ՍՈՒՅՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ

1. Ցանկացած Կողմ կարող է տեղյակ պահել Գլխավոր Քարտուղարին, որ սույն Կոնվենցիայի նպատակներով իր տարածքներից մեկը կիսված է մեկ կամ մի քանի շրջանների կամ որ իր շրջաններից երկուսը կամ ավելին միավորվել են մեկի մեջ:

2. Երկու կամ ավել Կողմեր կարող են տեղեկացնել Գլխավոր Քարտուղարին, որ իրենց մեջ մաքսային միության ստեղծման արդյունքում այդ Կողմերը սույն Կոնվենցիայի նպատակով կազմում են եզակի շրջան:

3. Վերը նշված պարբերություններ 1 կամ 2 ցանկացած տեղեկացում պետք է ուժի մեջ մտնի տեղեկացման տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ին:

### *Հոդված 29*

#### ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

1. Սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց ի պահ երկու տարի անց ցանկացած Կողմ կարող է, իր կողմից կամ այն տարածքի կողմից, որի համար միջազգային պատասխանատվություն է կրում և որը ետ է վերցրել Հոդված 27 համաձայն իր

համաձայնությունը, չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան իր տարածքում՝ Գլխավոր Քարտուղարին գրավոր տեղյակ պահելով:

2. Եթե Գլխավոր Քարտուղարը ստանում է չեղյալ հայտարարելու մասին Կողմի դիմումը նախքան հուլիսի առաջին օրը, ապա այն պետք է ուժի մեջ մտնի դրան հաջորդող տարվա հունվարի առաջին օրվանից և եթե այդ դիմումը ստացվել է հուլիսի առաջին օրվանից հետո, ապա այն պետք է ուժի մեջ մտնի, ասես այն ստացվել է դրան հաջորդող հուլիսի առաջին օրվանից առաջ:

3. Սույն Կոնվենցիան պետք է դադարեցվի, եթե համաձայն պարբերություն 1 և 2 կատարված չեղյալ հայտարարման արդյունքում, դրա ուժի մեջ մտնելու պայմանները, ինչպես սահմանված են Հոդված 26 պարբերություն 1, դադարում են գոյություն ունենալուց:

### Հոդված 30 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ցանկացած Կողմ կարող է սույն Կոնվենցիայի փոփոխություններ առաջարկել: Այսպիսի փոփոխությունների տեքստը և հիմնավորումները պետք է հաղորդվեն Գլխավոր Քարտուղարին, որը պետք է դրանք փոխանցի Կողմերին և Խորհրդին: Խորհուրդը կարող է որոշի՝

a) Առաջարկված փոփոխությունների քննարկման համար խորհրդակցություն հրավիրել՝ համաձայն Միացյալ Ազգերի Կանոնադրության Հոդված 62 պարբերություն 4 կամ

b) որ Կողմերից պետք է հարցվի, թե արդյո՞ղ նրանք ընդունում են առաջարկվող փոփոխությունները և խնդրեն նաև Խորհրդին ներկայացնել առաջարկության վերաբերյալ ցանկացած մեկնաբանություն:

2. Եթե սույն Հոդվածի պարբերություն 1 b) շրջանառության մեջ դրված առաջարկվող փոփոխությունը ոչ մի Կողմ չի մերժել, ապա դրա շրջանառությունից տասնութ ամսվա ընթացքում այն պետք է մտնի ուժի մեջ: Սակայն, եթե ցանկացած Կողմ մերժել է առաջարկությունը, ապա Խորհուրդը կարող է որոշել, կողմերից ստացված մեկնաբանությունների լույսի ներքո, որ անհրաժեշտ է այսպիսի փոփոխությունների քննարկելու համար խորհրդակցություն հրավիրել:

### Հոդված 31 ՎԵՃԵՐ

1. Եթե երկու կամ ավել Կողմերի միջև վեճ է առաջանում, կապված սույն Կոնվենցիայի մեկնաբանության կամ կիրառման հետ, ապա նշված կողմերը պետք է խորհրդակցեն և փորձեն վեճը լուծել բանակցությունների, հետաքննությունների, միջնորդության, հաշտեցման, արբիտրաժի, տարածաշրջանային մարմինների միջամտության, դատական կարգի կամ այլ իրենց ընտրությամբ այլ խաղաղ միջոցներով:

2. Ցանկացած այսպիսի վեճ, որը չի կարող վեր նշված կերպով լուծվել, ցանկացած կողմի հայցումով պետք է որշման համար փոխանցվի Արդարադատության Միջազգային Դատարան:

### Հոդված 32 ՎԵՐԱՊԱՀՈՒՄՆԵՐ

1. Սույն Հոդված պարբերություններ 2, 3 և 4 սահմանված վերապահումներից բացի ոչ մի այլ վերապահում չի թույլատրվում:
2. Ստորագրման, վավերացման և ընդունման ժամանակ ցանկացած Պետություն կարող է վերապահումներ կատարել սույն Կոնվենցիայի հետևյալ դրույթների առումով՝
  - a) Հոդված 19, պարբերություններ 1 և 2,;
  - b) Հոդված 27 և
  - c) Հոդված 31:
3. Պետությունը, որը ցանկանում է դառնալ Կողմ, բայց ուզում է պարբերություններ 2 և 4 սահմանված վերապահումներից բացի այլ վերապահումների իրավունք ունենալ, կարող է Գլխավոր Քարտուղարին տեղեկացնել այս մտադրության մասին: Եթե տվյալ վերապահմանը վերաբերող Գլխավոր Քարտուղարին տեղյակ պահելուց տասներկու ամիսների վերջում սույն Կոնվենցիան առանց վավերացման վերապահումների ստորագրած, վավերացրաց կամ ընդունած Պետությունների մեկ երրորդը առարկություն չի ներկայացրել սույն վերապահման վերաբերյալ, ապա այն պետք է համարվի ընդունված, սակայն հասկանալով, որ Պետությունները, որոնք առարկել են այս վերապահմանը, չպետք է վերապահում կատարող Պետության հանդեպ սույն Կոնվենցիայիով սահմանված իրավական պարտավորություններ կիրառեն:
4. Պետությունը, որի տարածքում անմշակ աճող բույսերը պարունակում են Ցանկ I ընդգրկված հոգեմետ նյութեր և որոնք ավանդաբար օգտագործվում են փոքր և իրազեկ խմբերի կողմից կախարդական կամ կրոնական ծիսակատարությունների համար, կարող է ստորագրման, վավերացման կամ ընդունման ցանկացած պահին վերապահումներ անել այս բույսերի առումով՝ ընդունելով Հոդված 7 դրույթները, բացառությամբ միջազգային առևտրին վերաբերող դրույթները:
5. Պետությունը, որը վերապահումներ է կատարել, գրավոր տեղեկացնելով Գլխավոր Քարտուղարին, ցանկացած ժամանակ կարող է ետ վերցնել իր բոլոր վերապահումները կամ դրանց մի մասը:

*Հոդված 33*  
ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

- Գլխավոր Քարտուղարը պետք է ծանուցի Հոդված 25 պարբերություն 1 նշված բոլոր Պետություններին՝
- a) Հոդված 25 սահմանված ստորագրությունների, վավերացումների և ընդունումների մասին,
  - b) Հոդված 26 սահմանված սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին,
  - c) Հոդված 29 սահմանված չեղյալ հայտարելու մասին և
  - d) Հոդվածներ 27, 28, 30 և 32 սահմանված հռչակագրերի և ծանուցումների մասին:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՅՆԻ համապատասխան Կառավարությունների կողմից ստորագրել են ստորև նշված և լիազորված անձինք:

ԿԱՏԱՐՎԱԾ Է Վիեննայում, հազար իննը հարյուր յոթանասուն մեկ թվականի փետրվարի քսան մեկին, մի եզակի օրինակ Չինեթեն, Անգլերեն, Ֆրանսերեն, Ռուսերեն և Իսպաներեն լեզուներով, որոնք հավասարապես վավերական են: Կոնվենցիան պահման համար տրվում է Միացյալ Ազգերի Գլխավոր Քարտուղարին, որը

հաստատված երկու օրինակ պետք է փոխանցի Միացյալ Ազգերի բոլոր Անդամներին և  
Հոդված 25 պարբերություն 1 նշված բոլոր այլ Պետություններին: